ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԸՄԲՌՆՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ. ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՓԻՐՈՒՄՅԱՆ Տ. Ա.

Արդի աշխարհում հանդուրժողականությունն առավել արդիական և բազմակողմանի քննարկման ենթակա թեմաներից է հասարակական կյանքի բոլոր մակարդակներում՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական և հոգևոր (կրոնական): Հոգևորը և հատկապես դրա կրոնական բաղադրիչը հասարակական կյանքի այն ոլորտն է, որտեղ հանդուրժողականության դրսևորումը առավել քան անհրաժեշտ է, քանի որ համաշխարհայնացվող աշխարհում բազմաթիվ են կրոնական կոնֆլիկտների և անհանդուրժողականության դրսևորումները կրոնական տարբեր խմբավորումների միջև: Հասկանալու համար, թե ինչ է կրոնական հանդուրժողականությունը, պետք է նախ և առաջ անդրադառնանք հանդուրժողականություն հասկացության ծագումնա-բանությանը, քանի որ ի սկզբանե «հանդուրժողականություն» ասելով նախ և առաջ հասկանում էին կրոնական հանդուրժողականություն: Այն բավական բարդ և բազմաբովանդակ հասկացություն է: Թեև գոյություն ունեն հանդուրժողականություն հասկացության մի շարք սահմանում-ներ, այնուամենայնիվ, այն միջազգային նշանակություն ձեռք բերեց շնորհիվ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակագրի: Հենց այս հռչակագրում է բավական խորությամբ արտահայտվում հանդուրժողականության բուն էությունը: Ըստ 1995 թ. նոյեմբերի 16-ի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընդունած «Հանդուրժողականության սկզբունքների հռչակագրի»՝ «հանդուրժողականությունը հարգանք է, հարուստ մշակութային բազմազանության ընդունում և ճիշտ ընկալում, մարդկային անհատականության ինքնաարտահայտման յուրօրինակ ձև: Հանդուրժողականությանը բնորոշ է իմացություն, հրապարակայնություն, հաղորդակցում, մտքի, խղճի, դավանանքի, համոզմունքի ազատություն: Այն ներդաշնակություն է բազմազանության մեջ: Հանդուրժողականությունը ոչ միայն բարոյական պարտք է, այլև քաղաքական և իրավական պահանջ, պատերազմի մշակույթից անցում է խաղաղության մշակույթի: Այն ամենևին էլ զիջում և անտարբերություն չէ: Հանդուրժողականությունը նախ և առաջ ակտիվ վերաբերմունք է, որը ձևավորվում է մարդու համընդհանուր իրավունքների և հիմնական ազատությունների ընդունման միջոցով: Հանդուրժողականությունը մարդու իրավունքների, մշակութային բազմազա-

նության, ժողովրդավարության և օրենքի գերակայության կրող է: Այն մերժում է դոգմատիզմը, ճշմարտության բացարձականացումը և հաստատում այնպիսի նորմեր և չափանիշներ, որոնք սահմանված են մարդու իրավունքների միջազգային հռչակագրերում: Հանդուրժողականության դրսևորումը, որը համարժեք է մարդու իրավունքների ընդունմանը, ամենևին էլ չի ենթադրում հանդուրժող վերաբերմունք սոցիալական անարդարությունների նկատմամբ, հրաժարում սեփական տեսակետից: Յուրաքանչյուրն ազատ է իր համոզմունքներում: Թեև մարդիկ տարբերվում են միմյանցից արտաքին տեսքով, կարգավիճակով, վարքով, արժեհամակարգով, այնուամենայնիվ բոլորն էլ հավասարապես իրավունք ունեն ապրելու և պահելու սեփական ինքնությունը: Ոչ մի դեպքում մեկի տեսակետը չի կարող պարտադրվել նաև մյուսներին»[1]: Ինչպես երևում է, հանդուրժողականությունը դեմ է ամեն տեսակ միօրինակության, միաչափության ու կարծրատիպերի: Նրան բնորոշ է բազմազանությունն ու տարբերությունների առկայությունը: Ընդունելով հանդուրժողականության մասին հռչակագիրը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն նպատակ էր հետապնդում աշխարհը զերծ պահել հետագա կրոնական, քաղաքական, մշակութային պատերազմներից, որոնք անխուսափելի են արդի համաշխարհայնացվող աշխարհում: Միայն հանդուրժողականության սկզբունքի ընդունումն ու գերակայությունն է ի զորու դիմակայել XXI դարի բազմաբնույթ մարտահրավերներին, որոնք գնալով ահագնանում և դառնում են անկառավարելի:

Հանդուրժողականությունը տարբեր կերպ է ընկալվել և մեկնաբանվել պատմական տարբեր ժամանակաշրջաններում: Թեև դեռևս անտիկ շրջանի մի շարք փիլիսոփաներ քննարկել են հանդուրժողականության խնդիրը, այնուամենայնիվ, առավել համակարգված և խոր կերպով հանդուրժողականություն հասկացությունը մշակել է անգլիացի փիլիսոփա Ջ. Լոկը: Դա է պատճառը, որ շատ հաճախ հենց նրան են համարում այդ հասկացության հիմնադիր: «Հանդուրժողականություն» բառը լատիներենից ֆրանսերենին անցել է մոտավորապես XVI դարում, և ինչպես նշում է Յու. Հաբերմասը, այդ ժամանակահատվածում այն ուներ բավական սահմանափակ իմաստ և համարժեք էր կրոնական հանդուրժողականությանը: Իր «Ե՞րբ պետք է լինենք հանդուրժող» հոդվածում Յու. Հաբերմասը բերում է Շ. Մոնտեսքյոյի հետևյալ միտքը. «Երբ որոշ երկրներ մի շարք կրոնների թույլտվության օրենք ընդունեցին, նրանք պետք է պարտադրեին փոխադարձ

---

[1] *Декларация принципов толерантности. Утверждена резолюцией 5.61 Генеральной конференции ЮНЕСКО от 16 ноября 1995 http://lib.icr. su/node/388 (25.05.2016)*

հանդուրժողականության դրսևորում ևս»[2]: Կրոնական հանդուրժողականությունը հատկապես կիրառության մեջ դրվեց ռեֆորմացիայի ժամանակաշրջանում, քանի որ հենց այս ընթացքում է հանդուրժողականությունը էական նշանակություն ունենում կրոնական կոնֆլիկտների լուծման գործընթացում: Հանդուրժողականության խնդիրը առաջին անգամ ծագել է արևմտյան քաղաքակրթությունում, մասնավորապես Անգլիայում, որտեղ XVII դարում տիրում էին կրոնական բազմակարծություն և կրոնական կոնֆլիկտներ: Ջ. Լոկը, ստեղծագործելով հենց այդ ժամանակաշրջանում, առաջիններից էր, որ ձևակերպեց կրոնական հանդուրժողականության դասական տեսությունը: Իր աշխատություններում Ջ. Լոկը առաջադրել է «ազատություն-իրավական միտք-բանականություն» բանաձևը, որը հետագայում որոշիչ դեր է ունեցել արևմտյան քաղաքակրթության ազատական արժեքների ձևավորման և զարգացման գործում[3]: Ըստ Լոկի՝ «ազատություն-բանականություն-հանդուրժողականություն» հարաբերակցությունում բանականությունը հնարավոր չէ առանց ազատ մտքի, կրոնական ազատության, առանց հանդուրժողականության դրսևորման այլ կրոնական հավատների նկատմամբ: Նա եկել է այն եզրահանգման, որ մտքի, խոսքի, կրոնական համոզմունքների ազատությունը համարվում են մնացած այլ ոլորտների ազատության գլխավոր երաշխիքը[4]: Հետագայում Անգլիայում Լոկի՝ կրոնական բազմազանության և կրոնական հանդուրժողականության սկզբունքների վրա ձևավորվեց քաղաքացիական հասարակություն: Իր «Ուղերձ կրոնական հանդուրժողականության մասին» աշխատությունում Ջ. Լոկը կրոնի համատեքստում հանդուրժողականությունը դիտարկում է որպես հասարակական դաշինք. ըստ նրա՝ նախ անհրաժեշտ է հստակ տարբերակել պետական և կրոնական հարցերը և պատշաճորեն սահմանել եկեղեցու ու պետության միջև գոյություն ունեցող սահմանները: Պետությունը մարդկային հանրույթ է, որի գլխավոր գործառույթը քաղաքացիական շահերի պաշտպանությունն ու պահպանումն են (կյանք, ազատություն, առողջություն, ֆիզիկական տառապանքների բացակայություն)[5], իսկ կրոնական հանրույթի գլխավոր նպատակը՝ Աստծո պաշտամունքն ու դրա միջոցով հավիտենական կյանքի ձեռքբերումը[6]:

---

[2] *Տե՛ս* **Хабермас Ю.** *Когда мы должны быть толерантными? О конкуренции видений мира, ценностей и теорий (Социологические иссле-дования, 2006, N 1, с. 45).*

[3] *Տե՛ս* **Гусев В.** *Идея свободы в философии Локка (Научные записки НаУКМА, т. 19. Философия и религиоведение, 2001, с. 36).*

[4] *Նույն տեղում, էջ 48:*

[5] *Տե՛ս* **Локк Дж.** *Послание о веротерпимости (Сочинения в 3 т., т. 3, М., 1988, с. 93).*

[6] *Նույն տեղում, էջ 98:*

Ըստ Լոկի՝ բոլորի հանդեպ չէ, որ պետք է հանդուրժող լինել: Հանդուրժողականություն պետք է ցուցաբերել միայն նրանց նկատմամբ, ովքեր իրենք էլ հանդուրժող են: Հենց այս սկզբունքն էլ ընկած է արդի ազատական-ժողովրդավարական արժեքների հիմքում: Հանդուրժողականությունը՝ որպես ազատական-ժողովրդավարական արժեք, հանդիպում է նաև Կ. Պոպերի մոտ: Ըստ նրա՝ նրանք, ովքեր դեմ են ազատականությանը, ժողովրդավարությանը, ռացիոնալիզմին, հանդուրժողականության թշնամիներ են: Հետևաբար՝ վերջինս չի կարող ազատականների կողմից հանդուրժողական վերաբերմունքի արժանանալ: Ժողովրդավարությունը ապահովում է «պայքարի դաշտ» յուրաքանչյուր ողջամիտ բարեփոխման համար, սակայն առանց որևէ բռնության գործադրման[7]: Կ. Պոպերը հանդուրժողականությունը համարում է սոցիալական բարիք և կարևոր չէ, թե ինչ է մարդը մարդուն՝ գայլ թե հրեշտակ, պետությունը պետք է ապահովի բոլորի իրավունքները՝ և՛ ուժեղների, և՛ թույլերի[8]:

Կրոնը մի հզոր ուժ է, որը կարող է ինչպես միավորել, համախմբել, ապրելու և գոյատևելու ուժ տալ հասարակությանը, այնպես էլ հասարակության մասնատման, պառակտման, ի վերջո՝ ոչնչացման պատճառ դառնալ: Ինչպես կարծում է Ա. Թոյնբին, կրոնը՝ որպես մշակութային երևույթ, համարվում է քաղաքակրթության համակարգաստեղծ կարևոր գործոն[9]: Արդի աշխարհում բազմաթիվ են պատերազմների և ահաբեկչությունների դեպքեր, որոնց հիմքում կրոնական անհանդուրժողականությունն է: Այլադավանների, այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչների կրոնական գաղափարների ու արժեքների նկատմամբ անհանդուրժողականությունը հանգեցնում է արյունահեղ պատերազմների, պետությունների, ազգերի, սոցիալական խմբերի մասնատման ու ոչնչացման: Միաժամանակ հասարակության ներսում կրոնական անհանդուրժողականությունը կարող է հզոր զենք դառնալ թշնամի պետությունների համար, որոնք, որպես կանոն, անմիջապես օգտվում են նման իրավիճակից: Այդ պատճառով էլ կրոնական հանդուրժողականությունը շատ կարևոր է ժամանակակից հասարակությունների միասնականության և անվտանգության ապահովման գործում: Այն համարվում է հասարակությունների համախմբման և ներքին կայունության ապահովման հիմք՝ պահելով նրանց տարբեր տեսակի ցնցումներից: Կրոնական հանդուրժողականության բացակայության պայմաններում կրոնական բազմազանությունը կարող է հասարակության պառակտման պատճառ

---

[7] Տե՛ս **Поппер К. Р**. *Открытое общество и его враги, т. 2, М., 1992, с. 187-188.*

[8] Տե՛ս **Поппер К. Р.** *Предположения и опровержения: рост научного знания, М., 2004, с. 580.*

[9] Տե՛ս **Тойнби А.** *Постижение истории: сборник, пер. с англ., М., 1991, с. 121.*

դառնալ: Կրոնական հանդուրժողականությունը մի կրոնական ուղղության (սուննիներ, շիաներ, բողոքականներ, կաթոլիկներ և այլն) հետևորդի համբերատար վերաբերմունքն է մեկ այլ կրոնական ուղղության հետևորդի նկատմամբ և ունի տարբեր մեկնաբանություններ ու ընկալումներ: Մի դեպքում այն կարող է դիտարկվել որպես մեծագույն արժեք, բարոյականություն, գիտելիք, տարբեր կրոնական արժեքների և գաղափարների ընդունման ձև, մյուս դեպքում՝ անտարբերության և ամենաթողության դրսևորում այլ կրոնական հավատների և հայացքների նկատմամբ: Երկու դեպքում էլ, անկախ նրանից՝ կրոնական հանդուրժողականությունը ընկալվում է դրական, թե բացասական իմաստով (հիմնված է ըմբռնման, հարգանքի, թե անտարբերության վրա), այն ապահովում է հասարակական տարբեր համակարգերի կայունությունն ու խաղաղ գոյակցումը, տարբեր կրոնական խմբերի, ուղղությունների, հավատալիքների միաժամանակյա գոյությունը: Իհարկե, այս երկու տեսակի կրոնական հանդուրժողականություններից առավել նախընտրելի է առաջին մոտեցումը՝ այլադավանների (քրիստոնյա, մահմեդական, բուդդայական) կրոնական արժեքների նկատմամբ հարգանքը, քանի որ անտարբերությունը, որի հիմքում որպես կանոն չիմացությունն է, վաղ թե ուշ կարող է հանգեցնել անհանդուրժողականության դրսևորման և կոնֆլիկտների:

Սակայն, չպետք է թույլ տալ, որպեսզի ծայրահեղ կրոնական հանդուրժողականությունը պատերազմների և բռնության պատճառ դառնա, երևույթ, որը վերջին շրջանում նկատվում է տարբեր կրոնական խմբավորումների միջև: Բազմաթիվ են կրոնական անհանդուրժողականության դրսևորումները հատկապես քրիստոնյա հանրության, այդ թվում նաև հայերի նկատմամբ: Քրիստոնեական մշակութային արժեքների ոչնչացմանն են նպատակաուղղված Նախիջևանում և Ադրբեջանում պարբերաբար ընթացող բռնության դրսևորումները, որոնք այդպես էլ չեն արժանանում միջազգային հանրության ուշադրությանը և չեն ենթարկվում որևէ պատժիչ գործողությունների: Խոսքը հայ մշակութային ժառանգության նկատմամբ բռնության դրսևորումների մասին է, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքում հայկական դարավոր մշակութային արժեքների բարբարոսաբար ոչնչացման մասին: Ջուղայում այլադավանների կողմից դաժանաբար ոչնչացվեցին 9-ից 16-րդ դարերի հայկական միջնադարյան խաչքարերը, որոնք հայ ժողովրդի մշակութային ինքնության և պատմական ժառանգության առհավատյաններն էին: Նմանատիպ կրոնական անհանդուրժողականության և վայրագության դեպք տեղի ունեցավ նաև Սիրիայում սեպտեմբերի 21-ին, երբ Հայաստանը նշում էր իր անկախության 23-րդ տարեդարձը: Իսլամական

ծայրահեղական խմբավորման ահաբեկիչների կողմից պայթեցվում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված, մեր եղեռնի զոհերի մասունքներն ամփոփող Սիրիայի հյուսիս-արևելքում գտնվող Դեր Զորի հայկական Սրբոց Նահատակաց եկեղեցին:

Եվրոպական հասարակությունը ևս անմասն չի մնում տարբեր կրոնական հավատալիքներ ունեցող ներգաղթյալների նկատմամբ հանդուրժողականության դրսևորման բացասական հետևանքներից: Դեռևս 2010 թ.-ի հոկտեմբերին՝ Քրիստոնյա-դեմոկրատական միության անդամների հետ հանդիպման ժամանակ, Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելը պաշտոնապես հայտարարեց բազմամշակութայնության նախագծի ձախողման մասին, նշելով, որ բոլոր այն փորձերը, որոնք ուղղված էին Գերմանիայում բազմամշակութային հասարակության ստեղծմանը, ձախողվեցին: Նա նաև հավելեց, որ բոլոր ներգաղթյալները պարտավոր են ընդունել գերմանական մշակույթն ու արժեքները[10]: Եվ սա պատահական չէր, քանի որ մի շարք սոցիոլոգիական հետազոտություններ վկայում էին այն մասին, որ Գերմանիա ներգաղթածները ոչ միայն չեն կարողանում ներառվել գերմանական հասարակություն, դեռ ավելին փորձում են խախտել տեղի սկզբունքներն ու նորմերը: Յուրաքանչյուր չորրորդ ներգաղթյալ չի տիրապետում գերմաներեն լեզվին, որևէ շփում չի հաստատում գերմանացիների, գերմանական մշակույթի, սովորույթների հետ: Եթե մինչև Ա. Մերկելը որևէ մեկը չէր բարձրաձայնել բազմամշակութայնության նախագծի ճգնաժամի կամ ձախողման մասին, ապա վերջինիս հայտարարությունից հետո ողջ Եվրոպան հանդես եկավ նմանատիպ հայտարարությունով: Ա. Մերկելը կարծես հանդես եկավ ողջ Եվրոպայի անունից՝ արտահայտելով արևմուտքի տրամադրվածությունը բազմամշակութային հասարակության նկատմամբ: Բամամշակութայնության նախագծի ձախողման մասին դիրքորոշումները փոխեցին հանդուրժողականության հասկացության ընկալումն ու կիրառումը եվրոպական հասարակության կողմից: Մինչ այդ հանդուրժողականություն քարոզող Եվրոպան հենց ինքը հանդես եկավ հանդուրժողականության գաղափարի ժխտմամբ հանուն ներդաշնակ հասարակական հարաբերությունների հաստատման:

Լայն իմաստով կրոնական հանդուրժողականությունը հարգանք է «ուրիշների» կրոնական հավատալիքների, կրոնական բազմակարծության, հայացքների, արժեքների նկատմամբ: Դա ամենևին էլ չի նշանակում հրաժարում սեփական կրոնական պատկանելությունից: Կրոնական

[10] О кризисе мультикультурализма http://thedecline.info/ru/part1 (04.06.2016)

հանդուրժողականությունն այն գաղափարի գիտակցումն է, որ յուրաքանչյուր անհատ ունի կրոնական ազատություն, իրավունք ընտրելու այն կրոնը, որին նախապատվություն է տալիս: Չնայած կրոնը կարող է անհանդուրժողականության և կոնֆլիկտների դրսևորման պատճառ դառնալ, սակայն դա ամենևին էլ չի նշանակում, որ կրոնը և կրոնական ինքնությունը սպառնում են հանդուրժողականության գոյությանն առհասարակ, քանի որ յուրաքանչյուր կրոնի նորմատիվային համակարգում մի շարք դոգմաների հետ միաժամանակ գոյություն ունի մի դրույթ, որը կոչ է անում առ համբերատարություն, մարդասիրություն, բարություն և խաղաղություն: Առհասարակ բոլոր խոշոր կրոններն էլ ենթադրում են բարության, բարոյականության, հանդուրժողականության, համաձայնության, համերաշխության, միասնության դրսևորում: Ասվածից ակնհայտ է, որ կրոնական հանդուրժողականության խնդիրն ի հայտ է գալիս այն դեպքում, երբ «մենք»-ի և «ուրիշներ»-ի միջև առկա են կրոնական հայացքների, պատկերացումների, կարծիքների, արժեհամակարգի ակնհայտ անհամաձայնություններ: Կրոնական կոնֆլիկտները ժամանակակից աշխարհում բավական արդիական են, քանի որ անմասն չեն թողնում և անդրադառնում են համաշխարհայնացման բարդ գործընթացի մեջ ներգրավված գրեթե բոլոր երկրներին: «Կրոնական և էթնիկական հակասությունները պայմանավորված են հասարակության մեջ կրոնական և էթնիկական հիմքերի վրա առաջացած կոնֆլիկտայնության մակարդակով: Մասնավորապես այնպիսի հակասություններ, որոնք առաջանում են պետական և ռազմական հաստատություններում գերիշխող որևէ կրոնական (էթնիկ) խմբերի կողմից»[11]: Կրոնական հակասությունների հիման վրա առաջացած կոնֆլիկտների լուծումը մեծ ջանքեր և իմաստություն է պահանջում, քանի որ բավական բարդ գործընթաց է: Կրոնական կոնֆլիկտները տարբեր կրոնական խմբերի բախումն են: Կոնֆլիկտը կարող է ունենալ դրսևորման տարբեր ձևեր՝ անհամաձայնություն, վեճ, պայքար, մրցակցություն, կրոնական թշնամանք, որոնք, ի վերջո, հանգեցնում են կրոնական պատերազմների: Որոշ դեպքերում դրանք հանդես են գալիս դասային, էթնիկական հակասությունների դրսևորման ձևով: Սոցիալ-քաղաքական կոնֆլիկտները, որոնցում մեծ դեր ունի կրոնական գործոնը, երբեմն անվանում են սոցիալ-կրոնական: Բազմաթիվ են կրոնական կոնֆլիկտների և անհանդուրժողականության օրինակները բոլոր կրոնների պատմությունում:

---

[11] **Брега А. Б.** *Политический риск в обеспечении военной безопас-ности: теория и основы управления, М., 2007, с. 27.*

Այսպիսով, կրոնական հանդուրժողականությունը աշխարհի, հասարակության միասնության և ամբողջականության պահպանման, կրոնական բազմազանության, պետությունների, քաղաքակրթությունների խաղաղ զարգացման և գոյակցման անհրաժեշտ գործոն է, կրոնական և մշակութային բազմազանության անբաժան մաս: Հանդուրժողականությունը համակարգաստեղծ և կառուցողական գործոն է, ուստի կրոնական հանդուրժողականության բացակայությունը կարող է հանգեցնել արդի սոցիումշակութային տարածության ապակառուցողական գործընթացի արագացմանը:

ИСТОКИ СОВРЕМЕННОГО ПОНИМАНИЯ ТОЛЕРАНТНОСТИ: РЕЛИГИОЗНАЯ ТОЛЕРАНТНОСТЬ

ПИРУМЯН Т. А.

Резюме

Концепция *толерантности* наиболее тщательно была разработана английским философом Дж. Локком. Именно поэтому многие считают его создателем концепции *толерантности.* Первоначально толерантность понималась как религиозная терпимость. Религия была и остается фактором, объединяющим или раскалывающим общество. Религиозная нетерпимость даже в современных обществах становится причиной войн, тем самым религиозная толерантность является необходимым фактором мирного развития и существования цивилизаций.

SOURCES OF CONTEMPORARY PERCEPTION OF TOLERANCE: RELIGIOUS TOLERANCE

T. PIRUMYAN

Abstract

The concept of *tolerance* in thorough manner was developed by English philosopher J. Lock. That is why many consider him the founder of the concept of *tolerance*. The first meaning of tolerance is religious tolerance. Religion has been a main factor which unites or divides society. Religious intolerance even in modern society becomes the cause of war, thus religious tolerance is an essential factor of peaceful development and the existence of civilizations.